

ՏԱՅՔԸ ԵՎ ԿՂԱՐՋՔԻ ԿՈՒՐԱՊՈՒԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ IX ԴԱՐՈՒՄ

ԱՐՄԱՆ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

IX դ. և X դ. սկզբին Մեծ Հայքի Տայք աշխարհի և նրան սահմանակից Գուգարք աշխարհի Կղարջք գավառն ու շրջակայքն ընդգրկող համանուն իշխանության՝ կուրապաղատության վարչաքաղաքական կազմության բացահայտումը խիստ կարևոր է¹: Խնդիրն այն է, որ դրանց հետ կապված զարգացումներն անընդհատ քննարկվում են հայկական ու վրացական պատմագիտության մեջ, և մերթընդմերթ առաջ են քաշվում տարաբնույթ ու իրարամերժ տեսակետեր: Իրավիճակն առավել բարդանում է այն պատճառով, որ վրացական պատմագիտության մեջ այս առումով հիմնական քննարկումը կատարվում է վաղուց ի վեր ներդրված այն մոտեցման շրջանակներում, թե իբր այդ ժամանակ Տայքն ընդգրկված էր վրացական միջավայրում՝ Կղարջքի հետ միասին ձևավորելով այն երկրամասը, որտեղ ծնունդ առավ վրացական պետականությունը: Վրացական պատմագիտության մեջ գործածվում է այսպես կոչված «Տառ-Կլարջեթի վրացական իշխանություն» արտահայտությունը՝ ի նկատի ունենալով Տայքում և Կղարջքում «վրաց» Բագրատունիների իշխանությունների առկայությունը: Նշվում է, որ այն առավել հստակ է արտահայտում տիրող իրավիճակը²:

Ստորև փորձենք պարզաբանել, թե ինչպիսին էր վարչաքաղաքական իրավիճակը Մեծ Հայքի հյուսիսարևմտյան երկրամասերում և թե որքանով են համապատասխանում իրականությանը վերոհիշյալ մոտեցումները:

Տայքի վարչաքաղաքական կազմությունը VIII դարում: 700 թ. արաբները Հայաստանի և Այսրկովկասի տարածքներից կազմավորեցին Արմինիա վարչական միավորը, որը բաղկացած էր Արմինիա անունը կրող չորս մասերից: Վերջը և հարևան երկրամասերը մտնում էին Երկրորդ Արմինիայի, իսկ Հայաստանի հողերի հիմնական մասը՝ Երրորդ և Չորրորդ Արմինիաների մեջ: Մեծ Հայքի աշխարհներից Գուգարքի արևմտյան հատվածը մտցվել էր Երկրորդ Արմինիայի մեջ, իսկ Տայքը՝ Երրորդ Արմինիայի³:

VIII դ. Հայաստանը գտնվում էր ծանր վիճակում, ուստի հայկական աղբյուրներում ուշադրությունը հիմնականում կենտրոնացված է երկրի վիճակի և հակաարաբական ապստամբությունների վրա: Նույն դարի վերջին տեղի ունեցավ մի իրադարձություն, որն ընդհանուր առմամբ փոխեց

¹ Տայքի վարչաքաղաքական կազմության որոշ հարցերի անդրադարձել ենք նաև նախկինում (տես **Ա. Եղիազարյան**, Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, թիվ 3, էջ 197-208):

² Տես «Очерки истории Грузии», т. II. Тбилиси, 1988, էջ 306, **С. Джанашиа**, Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского «Архитектура древней Армении». Тбилиси, 1947 և այլն:

³ Տես **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2010, էջ 50-62:

իրավիճակը Հայաստանում և մասնավորապես նոր իրավիճակ ստեղծեց Տայքում: Խոսքը հայոց 774-775 թթ. ապստամբության մասին է: Այն ավարտվեց պարտությամբ, իսկ դրա գլխավոր ոգեշնչողներ ու ղեկավարներ՝ Մամիկոնյանները ծանրագույն հարված ստացան ու կորցրին գրեթե բոլոր տիրույթները: Թերևս հենց այդ իրողությունն էր, որ, ինչպես կտեսնենք, դեպի նրանց նախկին տիրույթները՝ Տայքի լեռնային շրջաններն ուղղորդեց ապստամբությանը մասնակցած և արաբների վրեժից խուսափել ցանկացող Վասակ Բագրատունուն և նրա որդի Ատրներսեհին:

Ըստ Ղևոնդի՝ 774-775 թթ. ապստամբությունից հետո ստեղծված անելանելի իրավիճակից մղված՝ 789 թ. Ամատունիները և որոշ այլ նախարարներ՝ 12 հզ. ժողովրդով, հեռացան իրենց տիրույթներից և հասան «ի սահմանս Վրաց ի գաւառն Կող»⁴: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ Տայքի հյուսիսային Կող գավառը գտնվում էր «վրաց» սահմանների մոտ, դրանց հարևանությամբ, որից այն կողմ սկսվում էին այսպես կոչված վրացական հողերը, որոնց դեռ կանդորադառնա՞նք: Վրացի պատմաբան Ս. Ջանաշիան փորձում է ցույց տալ, որ Ղևոնդի՝ «հասանէր ի սահմանս Վրաց ի գաւառն Կող» արտահայտությունը ցույց է տալիս, որ Կող գավառը մտնում էր Վիրքի մեջ⁵: Այդ հիշատակությունը հակառակ իմաստ է արտահայտում և, բացի այդ, բերված հիշատակության մեջ նշված է ոչ թե «Վիրք», այլ «վրաց սահմաններ», որը Վիրքին չի նույնանում: Պատմիչի ընկալմամբ՝ «վրաց սահմաններ» հասկացությունը համապատասխանում էր Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանի Երկրորդ Արմինիա միավորին, որն ընդգրկում էր նաև Գուգարքի արևմտյան որոշ գավառներ: Այդ պատճառով էլ Կող գավառից հյուսիս գտնվող Գուգարքի Կղարջք գավառը հիշատակվում էր «վրաց սահմաններում»: Ղևոնդը Երկրորդ Արմինիայի մեջ մտնող տարածքները ընդհանուր առմամբ հիշատակում է «վրաց սահմաններ»-ում, քանի որ արաբ տիրողները Երկրորդ Արմինիայի մեծագույն մասը կոչում էին Վիրքի անունից՝ Ջուրգան⁶: Այդ իսկ պատճառով Ղևոնդը Գուգարքի արևմտյան մասը հիշատակում է այդ սահմաններում՝ ի նկատի ունենալով Վիրքից մեծապես տարբերվող վարչատարածքային միավոր Ջուրգանը: Այստեղ, կարծում ենք, կար նաև տվյալ հասկացության երկրորդ և գլխավոր ընկալումը՝ վրացադավան բնակչության առկայության իրողության առումով:

Այս հայեցակետից իրավիճակի դիտարկումը հնարավորություն է տալիս իրականացնել մի շարք ճշգրտումներ.

ա. Տայքը վրացադավան երկրամասերի հետ այս շրջանում որևէ առնչություն չուներ,

բ. եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ Տայքի հյուսիսային Կող գավառը մտնում էր վրացադավան երկրամասերի մեջ, իսկ դա անհնար է, ապա դարձյալ Տայքն իր բացարձակ մեծամասնության մեջ առնչություն չունենալով այդ երկրամասերի հետ և միայն սահմանակից էր դրանց,

⁴ «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 168-169:

⁵ Տե՛ս Ս. Джанашиа, նշվ. աշխ., էջ 14-15:

⁶ Տե՛ս Ա. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 57-58, 60-61, նույնի՝ Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, ՊԲՀ, 2008, թիվ 3, էջ 198-199:

գ. «վրաց սահմաններ» արտահայտության ներքո Վիրք հասկանալու տեսակետն անընդունելի է տվյալ ժամանակաշրջանի վարչաքաղաքական բաժանունը հաշվի առնելով, և վարչական առումով ո՛չ Վիրքին և ո՛չ էլ այսպես կոչված «Տառ-Կլարջեթին» վերագրվել չեն կարող:

Բագրատունիների ճյուղի հաստատումը Կղարջքում և նրա տիրույթները: Վարդան վարդապետը հաղորդում է, որ 774-775 թթ. ապստամբությունից հետո դրան մասնակցած Բագրատունիները, փախչելով արաբների վրեժխնդրությունից, հեռացան իրենց տիրույթներից և ապաստանեցին Կղարջքում: Ըստ պատմիչի՝ Կղարջքում հաստատվել է Վասակ Բագրատունին՝ հայոց իշխան Աշոտ Բագրատունու (732-748) որդին⁷:

Ըստ «Քարթլիի մատյան»-ի՝ Ատրներսեհը, որը Վասակի որդին էր, տիրում էր Շավշքին, Կղարջքին, Նիգալին, Ագարին (Էգր կամ Աճարա), Սանցխեին, Ստորին Տայքին և Ասիսփորին (իմա՝ Արսեաց փոր)⁸: Վրաց պատմագիտական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, թե Վասակը հաստատվել է Տայքի հյուսիսային մասում և Կղարջքում, որոնք դրանից հետո էլ իբր շարունակել են մաս կազմել «վրացական» Բագրատունիների տիրույթների⁹: Տայքի հյուսիսում՝ արևմուտքից արևելք գտնվում էին Արսեաց փոր, ճակք և Կող գավառները¹⁰: Այն, որ սկզբում Բագրատունիները հաստատվել էին Արսեաց փոր գավառում, հիմնավորվում է «Քարթլիի մատյան»-ի տեղեկությամբ և այն իրողությամբ, որ Արսեաց փոր գավառը վաղուց ի վեր այն ամենահուսալի ապաստանն էր, որտեղ ամրանում էին արաբների դեմ ապստամբող հայ իշխանները: Սակայն այն պնդումը, թե հետագայում այդ գավառը մաս է կազմել «վրացական» Բագրատունիների տիրույթների, հակասում է առաջին հերթին հենց վրացական աղբյուրների տեղեկություններին, որոնց ստորև կանդրադառնանք:

Ինչ վերաբերում է «Ստորին Տայք»-ին, ապա այն Տայքի ամենահյուսիսային՝ Կղարջքի սահմանին գտնվող Տայոց քար (վրացերեն Կարնի-Տայս կամ Տաոս-Կարի, թարգմանաբար՝ Տայքի դուռ) բերդի շրջակայքի և Կղարջքի մի մասի (Արտանուջ բերդով) ընդհանրական անվանումն էր¹¹: Այսինքն՝ Ստորին Տայքն ընդգրկում էր Տայքի հյուսիսային ճակք գավառը, որտեղ գտնվում էին Տայոց քար բերդն ու Իշխանի եկեղեցին:

Դատելով վերոհիշյալից՝ Վասակի որդի Ատրներսեհը Տայքում տիրում էր Արսեաց փոր և ճակք գավառներին:

Հավելենք նաև, որ եթե Վասակն իր որդի Ատրներսեհի հետ արդեն հեռացել էր Կղարջքի կողմերը 775 թ. կամ դրանից քիչ անց, ապա 789 թ. դրությամբ Կող գավառը, ըստ Ղևոնդի տեղեկության, նրանց տիրույթների մեջ չէր մտնում: Ավելին, ստորև կտեսնենք, որ նրանք կարճ ժամանակ

⁷ Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 81-82:

⁸ Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Զ. Սկրտունյանի, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, թիվ 9, էջ 62, “Матиане Картлisa”. Перевод, введение и примечания М. Лордкипанидзе. Тбилиси, 1976, էջ 28-29:

⁹ Տե՛ս “Очерки истории Грузии”, т. II, էջ 306-316: Տե՛ս նաև “Некоторые вопросы истории Грузии в армянской историографии” (Тбилиси, 2009) ժողովածուի նյութերը:

¹⁰ Տե՛ս Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Եր., 2001:

¹¹ Տե՛ս Ն. Աղոնց, Երկեր, հ. Ե, Եր., 2012, էջ 387:

միայն տիրեցին Արսեաց փոր ու ճակք գավառներին, ուստի վերջիններս Ատրներսեհի որդի Աշոտի տիրույթների մեջ չէին մտնում:

Հայոց իշխան Աշոտ Մսակերի և Կղարջքի Աշոտ կուրապաղատի տիրույթների միջև սահմանը: Վասակի թոռ և Ատրներսեհի որդի Աշոտը (մահ. 826 թ.), որին Բյուզանդիայի կայսրը կուրապաղատի կոչում էր շնորհել¹², ըստ պատմիչ Ղավթի որդի Սմբատի՝ իշխում էր միայն «Շավշքում և Կղարջքում»¹³: Այնուհետև հեղինակը տեղեկացնում է, որ Աշոտի տիրույթներն էին Շավշքը, Կղարջքը և Նիգալը¹⁴: Կող գավառի՝ Կղարջքի կուրապաղատին պատկանելու հարցն ինքնըստինքյան դուրս է գալիս քննությունից, քանի որ այդ երեք գավառներից բաղկացած կուրապաղատությունն ընդհանուր սահման չուներ նրա հետ: Իսկ այն, որ Աշոտ կուրապաղատի իշխանությունը տարածվում էր միայն Կղարջքի և հարևան որոշ շրջանների վրա, ցույց են տալիս նաև Գեորգի Մերչուլի հաղորդումները, ըստ որոնց՝ Կղարջքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցու ողջ եկեղեցաշինական գործունեությունը, որը հովանավորվում էր Աշոտ կուրապաղատի կողմից, ամփոփվում էր միայն Կղարջքով¹⁵: Նկարագրելով Կղարջքի կուրապաղատության վանքերն ու եկեղեցիները՝ Գրիգոր Խանձթեցին մասնավորապես պատմում է, որ դրանք մի կողմից սահմանակցում են Աբխազաց թագավորությանը Ղադո լեռներով (Մոսքական լեռների շրջանում), իսկ մյուս կողմից՝ շրջապատված են Շավշքի մեծ գետերով¹⁶:

Փաստորեն, Ատրներսեհից հետո Կղարջքի Բագրատունիների տիրույթները զգալիորեն կրճատվել էին: Մեր կարծիքով, իրադրությունը զարգացել է հետևյալ ձևով: 775 թ., երբ ճնշվեց ապստամբությունը Հայաստանում, Տայքին տիրող Մամիկոնյանները ծանր հարված ստացան և դրանից հետո այլևս ուշքի չէկան: Երբ Վասակ Բագրատունին իր որդի Ատրներսեհի հետ մոտ 775 թ. գաղթեց Կղարջք¹⁷, Շիրակի Բագրատունիները Տայքին դեռևս չէին տիրում: Վասակի և Ատրներսեհի՝ Տայքի հյուսիսարևմտյան անմատչելի շրջաններում, այսինքն՝ Պարխարյան լեռներում գտնվող Արսեաց փոր գավառում ապաստանելն այդ առումով հասկանալի է:

802 թ. հայոց իշխան դարձավ Աշոտ Մսակեր Բագրատունին, որի օրոք Հայաստանը թևակոխեց քաղաքական անկախության վերականգնման փուլ: Նրա ջանքերով Բագրատունիների տիրույթները մեծապես ընդարձակվեցին, որի շնորհիվ նա դարձավ Հայաստանի խոշորագույն հողատերը: Եվ երբ Աշոտ Մսակերը ժառանգական իրավունքով տիրեց Տայքին¹⁸ (Վարդան վարդապետը հաղորդում է. «Աշոտ և Շապուհ...գրաւեցին յին-

¹² Տե՛ս Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 77:

¹³ Տե՛ս Сумбат Давитис-дзе. История и повествование о Багратионах. Тбилиси, 1979, էջ 31:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 31-32:

¹⁵ Տե՛ս Георгий Мерчуле. Житие Св. Григория Хандзтийского. Грузинский текст, введение, издание, перевод Н. Марра // “Тексты и разыскания по армяно-грузинской филологии”. Т. VII. СПб., 1911, գլ. X, XXVIII, XXVIII, XXXIV և այլն:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, գլ. XXII:

¹⁷ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, Եր., 2006, էջ 485: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծիք է հայտնել, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել 775-784 թթ. (տե՛ս Ա. Тер-Гевонд-ян. Армения и Арабский Халифат. Ер., 1977, էջ 124):

¹⁸ Տե՛ս «Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական», հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

քեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»¹⁹), Վասակը և Ատրնէրսեիը քաշվեցին Կղարջք: Այդ պատճառով ո՛չ Աշոտ կուրապաղատը և ո՛չ էլ, ինչպէս կտեսնենք, նրա որդիները Տայքի որևէ հատվածի չէին տիրում:

Այն, որ Աշոտ Մսակերը տիրում էր Տայքին, հիմնավորվում է այլ կարևոր իրողություններով ևս: Արաբների հալածանքների պատճառով ծանր դրության մեջ հայտնված Գնունիներին նա IX դարի սկզբին վերաբնակեցրել էր Տայքում²⁰, ինչպէս նաև ճակք գավառում կառուցել Կամախ կամ Կաղամախ (վրացական աղբյուրում՝ Կալմախ) ամրոցն ու այնտեղ տեղավորել իր ընտանիքը²¹: Վախուշտ Բագրատիոնին տեղեկացնում է, որ Կալմախը կառուցել են Յայաստանի Բագրատիոնիները, որոնք ցանկացել են տիրել նաև Կղարջքին, բայց հաջողության չեն հասել²²: Կալմախը տեղադրվում է ճակք գավառում՝ Տայոց քարի հարևանությամբ, որով հիմնավորվում է ճակք գավառի՝ Կղարջքի Բագրատիոնիների տիրույթներից դուրս լինելը: Արսեաց փոր գավառը նույնպէս, ըստ Սմբատի որդի Դավթի՝ դուրս էր Աշոտ կուրապաղատի տիրույթներից:

Տայքի պատկանելությունը Շիրակի Բագրատիոնիներին արձանագրված է նաև արաբական աղբյուրներում: Արաբ հեղինակները մեկ կապակցության մեջ են հիշատակում Շիրակն ու Տայքը (Սիրաջ-Թայր)²³, որն անկասկած պայմանավորված էր դրանց՝ Շիրակի Բագրատիոնիներին պատկանելու իրողությամբ: Այլապէս, Տայքը կհիշատակվեր առանձնաբար և կամ պարզապէս չէր հիշատակվի: Իսկ նման հիշատակությունը, բացի այն, որ ցույց է տալիս Տայքի՝ Շիրակի Բագրատիոնիներին պատկանելը, նաև արտացոլում է դրա կարևորությունը վերջիններիս տիրույթների համակարգում:

Ուսումնասիրողները նախկինում էլ ցույց են տվել, որ Աշոտ կուրապաղատի իշխանությունը տարածվում էր միայն Կղարջքում և մերձակայքում²⁴: Մինչդեռ, վրաց պատմաբաններից ոմանք փորձել են ապացուցել, որ Աշոտ կուրապաղատի տիրույթների մեջ էին մտնում Շավշքը, Կղարջքը, Նիգալը, Ագարը (Աճարա), Տայքը, Սամցխեն, Ջավախքը և Արտահանը²⁵: Մյուս կողմից, արձանագրելով, որ Աշոտ կուրապաղատի մահից հետո նրա տիրույթները գրավվեցին արաբների կողմից²⁶, միաժամանակ նշում

¹⁹ Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 76:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 77:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 83: Տե՛ս նաև Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Յայաստանը, Եր., 2008, էջ 246:

²² Տե՛ս Вахушти Багратиони, История царства Грузинского, Тб., 1976, էջ 186:

²³ Տե՛ս Ibn Khordâdbeh, Kitâb al-masâlik wa'l-mamâlik, -Bibliotheca Geographorum Arabicorum (BGA), p. VI, Lugd. Bat., 1967, էջ 122, Ibn al-Fakih al-Hamadani, Kitâb al-boldân, -BGA, p. V, Lugd. Bat., 1967, էջ 290-291, «Kitâb al-a'lâk an-nafisa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh et Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhih al-Kâtib Al-Jakûbî».-BGA, p. VII, Lugd. Bat., 1967, էջ 364 և այլն: Տե՛ս նաև А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 42:

²⁴ Տե՛ս Յ. Մարկուարտ, Յայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Յ. Մ. Յապրզեան, Վիեննա, 1913, էջ 138, Ն. Աղոնց, Երկեր, հ. Ա, էջ 504:

²⁵ Տե՛ս Դ. Մուսխելիշվիլի, Վրաստանի պատմական աշխարհագրության հիմնական հարցերը, գիրք 1, Թբիլիսի, 1977, գլ. II, § 6 (էջ 10) (վրացերէն):

²⁶ Տե՛ս «Очерки истории Грузии», т. II, гл. VI, § 4:

են, որ դրանք անցել են Աշոտի որդիներին և բաժանվել երկու մասի՝ Կղարջք և Տայք²⁷:

Կղարջքի Աշոտ կուրապաղատի գործունեության վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրների հիշատակությունները դարձյալ խոսում են այն բանի օգտին, որ նա Տայքում տիրույթներ չուներ: IX դ. սկզբին Կղարջքի Աշոտ կուրապաղատը ակտիվ գործունեություն է ծավալում: Վարդան վարդապետը տեղեկացնում է, որ «...տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Յայոց իշխանի՝ գերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան»²⁸: Աշոտը սկզբում «տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփլիս, լեռնակողմամբն հանդերձ»²⁹: Այսինքն՝ Աշոտը տիրում էր Գուգարքի Կղարջք գավառին և այնտեղից էլ սկսեց Գուգարքի արևելյան մասի նվաճումը³⁰: Ուստիև, հստակորեն նշված է՝ «Կղարջքից մինչև Տփղիս»:

Եթե ի մի բերենք վերն ասվածը, կարող ենք արձանագրել հետևյալը.

ա. VIII դ. վերջում Կղարջք գաղթած Վասակ Բագրատունին և նրա որդի Ատրներսեհը կարողացել էին տիրել Տայքի Արսեաց փոր գավառին և Կղարջքի ու Տայքի սահմանին գտնվող որոշ շրջանների,

բ. հայոց իշխան Աշոտ Մսակերը IX դ. սկզբին, ի թիվս Մամիկոնյանների պատկանող այլ շրջանների, ժառանգական իրավունքով իր տիրույթներին կցեց նաև Տայքը,

գ. Կղարջքի Բագրատունիների տիրույթներն ամփոփվեցին Տայքից հյուսիս գտնվող երկրամասերում, և այդ պատճառով Աշոտ կուրապաղատի գործունեության հետ կապված մանրամասն տեղեկություններ հաղորդող Դավթի որդի Սմբատ պատմիչը և Գրիգոր Խանձթեցու վարքագիր Գեորգի Մերչուլը խնդրո առարկա շրջանին վերաբերող հիշատակություններում Տայքի մասին ընդհանրապես չեն խոսում,

դ. Տայքի հյուսիսային գավառներից ճակքի և Կողի վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները հնարավորություն են տալիս հստակեցնելու Աշոտ Մսակերի և նրա անվանակից Կղարջքի կուրապաղատի օրոք դրանց պատկանելությունը Շիրակի Բագրատունիներին, իսկ ինչ վերաբերում է Արսեաց փոր գավառն Աշոտ Մսակերին պատկանելու հարցին, ապա դա հիմնավորվում է Աշոտ կուրապաղատի տիրույթների վերաբերյալ Դավթի որդի Սմբատի հաղորդած տեղեկություններով,

ե. Աշոտ Մսակերի և Աշոտ կուրապաղատի տիրույթների միջև սահմանագիծն անցնում էր Կղարջքի լեռների հարավային հատվածի ջրբաժանով:

Աշոտ կուրապաղատի որդիների տիրույթները և Տայքը: Ըստ Ս. Ջանաշիայի, IX դ. առաջին կեսին Աշոտ կուրապաղատի որդիներն ընդարձակեցին իրենց տիրույթները (ըստ ուսումնասիրողի՝ «իրենց թագավորությունը», որը սխալ է) Կուր գետի վերին հոսանքի ավազանում՝ տիրելով Կող գավառին, Արտահանին, Ջավախքին, Սամցխեին և Տայքին: Հենց այս

²⁷ Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, հ. II, Թբիլիսի, 1965, էջ 111 (վրացերեն):

²⁸ Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 78:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Տե՛ս Ն. Աղոնց, Երկեր, հ. Ե, էջ 389:

տարածքներն էլ նրանք բաժանեցին իրենց միջև³¹: Այդ իշխանությունը, ըստ Ս. Ջանաշիայի՝ IX-X դդ. սահմանագլխին ներկայացված էր երկու ճյուղով՝ Կղարջքի կամ Արտանուջի, որի հիմնադիրն Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհն էր, և Տայքի, որի հիմնադիրը նրա մյուս որդին էր՝ Բագրատը³²: Այդ տեսակետը հակասում է «Քարթլիի մատյան»-ի և Վախուշտ Բագրատիոնի տեղեկություններին, որոնք, հանվանե հիշատակելով Աշոտ կուրապաղատի որդիների տիրույթները, դրանց թվում Տայքի որևէ գավառ չեն հիշատակում: Ըստ «Քարթլիի մատյան»-ի՝ 881 թ. հայ-արքազական բախումից որոշ ժամանակ առաջ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գվարամը տիրել էր Ջավախքին, Թռեղքին, Տաշիրքին, Աշոցքին և Արտահանին, որից հետո իր տիրույթները բաժանել էր եղբայրների՝ Ատրներսեհի և Բագրատի հետ, իսկ Աշոցքը՝ զիջել Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն³³: Վախուշտ Բագրատիոնը տեղեկացնում է, որ Աշոտ կուրապաղատի որդիներից Բագրատը տիրում էր Քարթլին և Սամցխեին, Ատրներսեհը՝ Կղարջքին, իսկ Գվարամը՝ Ջավախքին, Թռեղքին ու Աշոցքին և Յայաստանի որոշ հատվածների³⁴:

Կղարջքի Բագրատունիների այսչափ ընդարձակվելը պատահական չէր: Խնդիրն այն է, որ հայոց թագավոր Աշոտ Ա-ի մի քույրն ամուսնացած էր ապագա «վրաց» թագավոր Ատրներսեհի պապի՝ Բագրատի³⁵, իսկ մյուսը՝ Գվարամի հետ³⁶: Վրացական երկու աղբյուրների վերոհիշյալ տեղեկությունների համեմատությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ Արտահանը, Աշոցքը և Տաշիրքը Շիրակի Բագրատունիների տիրույթներ էին: Այստեղ հավելենք, որ, քարտեզագրելով Վախուշտ Բագրատիոնի տեղեկության մեջ նշված երեք եղբայրներին պատկանող գավառները, տեսնում ենք, որ Ատրներսեհը տիրում էր բուն Կղարջք գավառին, Գվարամը՝ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք տեղաբաշխված Արտահանին, Ջավախքին, Աշոցքին, Թռեղքին, ինչպես նաև Ջավախքի արևելքում գտնվող Տաշիրքին, իսկ Բագրատի տիրույթը՝ Վերին Քարթլին կամ Սամցխեն, հյուսիսում սահմանակցում էր արքազաց թագավորությանը, արևմուտքում՝ Ագարին, հարավում՝ Գվարամի տիրույթներին, իսկ հարավ-արևմուտքում՝ Շավշքին: Ամենայն հավանականությամբ, Բագրատի տիրույթ «Քարթլի»-ն վերաբերում էր Ագարին և Շավշքին, իսկ Բագրատի տիրույթները Տայքից բաժանված էին Գվարամի հողերով: Բացի այդ, վրացական աղբյուրներում երեք եղբայրների տիրույթների մեջ Տայքի որևէ հատված հիշատակված չէ: Վերևում տեսանք, որ վրաց պատմագրության մեջ փորձ է կատարվել ցույց տալու, թե Տայքը պատկանում էր Աշոտ կուրապաղատի որդի Բագրատին, բայց վրացական աղբյուրների տեղեկությունների քարտեզագրումը ցույց է տալիս, որ Բագրատի տիրույթները չէին կարող ընդգրկել Տայքը

³¹ Տե՛ս *С. Джанашиа*, նշվ. աշխ., էջ 21:

³² Տե՛ս նույն տեղը, էջ 9-10, 20-21:

³³ Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 63, «Матиане Картлиса», էջ 31:

³⁴ Տե՛ս *Вахушти Багратиони*, նշվ. աշխ., էջ 187:

³⁵ Տե՛ս *Վարդան վարդապետ*, նշվ. աշխ., էջ 79, *Ն. Աղոնց*, Երկեր, հ. Ա, էջ 505:

³⁶ Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 63, «Матиане Картлиса», էջ 31, *Вахушти Багратиони*, նշվ. աշխ., էջ 187:

այն պարզ պատճառով, որ նրան սահմանակից չէին: Հավելենք նաև, որ Գվարամի և Նասրի տիրույթները 881 և 888 թթ.-ի հայ-արխազական բախումներում նրանց կրած պարտությունից հետո անցան իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն³⁷:

Վերոհիշյալ իրողությունները հաստատում են նաև Գեորգի Մերչուլի տեղեկությունները Կղարջքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցու եկեղեցաշինական գործունեության մասին նաև Աշոտ կուրապաղատի մահից հետո: Այդ գործունեությունն ամփոփված էր միայն Կղարջքով և հարևան որոշ շրջաններով³⁸: Այն բանից հետո, երբ Կղարջքի հոգևորականներից Սաբանը (Սավվա) տեղափոխվեց Տայքում գտնվող Իշխանի եկեղեցի, դարձեց ենթարկվել Կղարջքի կուրապաղատ Բագրատին³⁹: Խնդիրն այն էր, որ Իշխանի եկեղեցին դուրս էր Կղարջքի կուրապաղատության սահմաններից: Իշխանի վանքը կառուցվել է հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցու (641-661) կողմից՝ իր հայրենի Իշխան գյուղում⁴⁰: Ըստ Գեորգի Մերչուլի՝ այն վերանորոգվել է Գրիգոր Խանձթեցու մորաքրոջ որդի վանական Սաբանի կողմից⁴¹:

Իշխանի լքված վանքը Գրիգոր Խանձթեցին և Սաբանը տեսել էին 826 թ.՝ Կոստանդնուպոլսից վերադառնալիս: Սաբանը ցանկացավ անմիջապես անցնել վանքի վերականգնման աշխատանքներին, սակայն Գրիգոր Խանձթեցին առաջարկեց նախ գնալ Կղարջք՝ Խանձթա վանք⁴²: Կղարջքում նրանց հայտնի դարձավ Աշոտ կուրապաղատի մահվան մասին, և երկու հոգևորականները ցավակցություն հայտնեցին Աշոտի որդիներին, որից հետո Սաբանը մեկնեց Իշխան⁴³: Գրիգոր Խանձթեցուն շուտով հետաքրքրեց, թե ինչ վիճակում է Սաբանը: Վերջինիս մասին նա պատմեց Կղարջքի Բագրատ կուրապաղատին, որը մարդ ուղարկեց՝ Սաբանին հրավիրելու իր մոտ: Վերջինս հրաժարվեց գալ, և կուրապաղատը նոր նամակ ուղարկեց՝ կցելով նաև Գրիգոր Խանձթեցու նամակը: Այս անգամ Սաբանը եկավ՝ հատկապես դրված Գրիգոր Խանձթեցու նամակից⁴⁴: Երբ կուրապաղատն ընդունեց Սաբանին, հարցրեց, թե ինչու նա հրաժարվեց ներկայանալ իր հրավերով: Սաբանը պատասխանեց, որ ծառայում է միայն Քրիստոսին և այժմ էլ եկել է միայն Գրիգոր Խանձթեցու հրավերով: Մեր կարծիքով, պատճառն այն էր, որ Տայքը Շիրակի Բագրատունիների տիրույթն էր, ուստի Իշխանի վանքում հաստատված Սաբանը ենթակա էր Շիրակի Բագրատունիներին, սակայն, լինելով քաղկեդոնական՝ ընդունում էր Գրիգոր Խանձթե-

³⁷ Տե՛ս **Ա. Եղիազարեան**, Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կիւրոպաղատութիւնը, Բազմավէպ, Վենետիկ, Ս. Ղազար, 2009, էջ 187-192:

³⁸ Տե՛ս **Георгий Мерчуле**, նշվ. աշխ., գլ. X, XXVIII, XXVIII:

³⁹ Տե՛ս նույն տեղը, գլ. XXVI:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, Ер., 1961, էջ 128-132:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, գլ. V: Ն. Տոկարսկին կարծում է, որ Սաբանը Իշխանի վանքը ոչ թե վերակառուցել, այլ բերել է այն վիճակի, որ հնարավոր լինի այնտեղ պատարագ մատուցել (տե՛ս **Н. Токарский**, Архитектура древней Армении. Ер., 1946, էջ 132):

⁴² Տե՛ս **Георгий Мерчуле**, նշվ. աշխ., գլ. XIV:

⁴³ Տե՛ս նույն տեղը, գլ. XIV:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, գլ. XXVI:

ցու հոգևոր իշխանությունը: Այդ դեպքից հետո Բագրատ կուրապաղատը Գրիգորի և Սաբանի հետ այցելեց Իշխան⁴⁵:

Իշխանի վանքում Սաբանի հաստատվելը հետևանք էր այն բանի, որ IX դ. Շիրակի Բագրատունիներն այնքան էլ ուշադրություն չէին դարձնում դավանանքային հարցերին: Թեև Տայքը կցված էր Բագրատունյաց տիրություններին, այնտեղ քաղկեդոնականները ազատորեն գործելու հնարավորություն էին ստացել: Վարդան վարդապետը հաղորդում է, որ «Սահակ Մռուտն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի Սևունքն, և հալածեալ անտի վասն հաւատոց (իմա՝ դավանանքի - Ա. Ե.), եկն ի Յայս առ Աշոտ»⁴⁶ (իմա՝ Աշոտ իշխանաց իշխան - Ա. Ե.): Դա տեղի էր ունեցել 876 թ. ոչ շատ առաջ, երբ Աշոտ Բագրատունին վաղուց արդեն խալիֆայության կողմից ճանաչվել էր որպես Յայաստանի և այսրկովկասյան երկրների իշխանաց իշխան⁴⁷: Այստեղից հետևում է, որ այդ ժամանակ Տայքում քաղկեդոնականներն այնքան էին զորեղացել, որ դավանանքի պատճառով կարողացել էին հալածել Աշունքի (Օշկ) եպիսկոպոսին: Թերևս այդ ժամանակներից էլ սկսվել էր Աշունքի վանքի քաղկեդոնականացման գործընթացը: Բագրատունյաց հզորացման շրջանում այս գործընթացը դադարել էր, և մինչև Սմբատ Ա-ի մահը քաղկեդոնականները Տայքում ակտիվություն չէին ցուցաբերում: X դ. կեսերին միայն այնտեղ լայն եկեղեցաշինական աշխատանքներ են սկսվում⁴⁸:

Գրիգորի համաձայն գործունեության շրջանում քաղկեդոնիկ եկեղեցու կողմից ձեռնարկվել է նաև հայոց իշխան Աշոտ Մսակերին քաղկեդոնական դավանանքի հետևորդ դարձնելու փորձ: Նրա միջոցով հնարավոր էր լինելու քաղկեդոնականությունը տարածել ողջ Յայաստանում: Դատելով Մխիթար Այրիվանեցու և Վարդան վարդապետի տեղեկություններից՝ քաղկեդոնականներն իրենց նպատակների մեջ որոշ հաջողության հասել էին, և Աշոտ Մսակերը սկսել էր տատանվել, սակայն երբ Միջագետքից ժամանած ոմն միաբնակ վանական դավանաբանական վեճում հաղթեց քաղկեդոնիկ հոգևորականին, Աշոտ Մսակերը վերջինիս վտարեց երկրից⁴⁹:

Ատրներսեհ Բագրատունու տիրությունը և Տայքում նրա ունեցած կալվածքների խնդիրը: Երբ 881 և 888 թթ. հայ-աբխազական բախումներից հետո Աշոտ Ա-ն Գուգարքի կենտրոնական և արևմտյան հատվածները կցեց արքունի տիրություն⁵⁰, Կղարջքի Բագրատունիների տիրությունը սահմանափակվեցին Կղարջքով և հարևան որոշ շրջաններով:

Վրացական պատմաբաններից ոմանք փորձում են ցույց տալ նաև, թե «վրաց» ապագա թագավոր Ատրներսեհն Աշոտ կուրապաղատի ժառանգներից Տայքի ճյուղի ներկայացուցիչն էր⁵¹: Հովհաննես Դրասխանակերտ-

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, գլ. XXVI:

⁴⁶ Տե՛ս Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 85:

⁴⁷ Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Յայոց», բնագիրը Մ. Էմինի, Եր., 1996, էջ 136:

⁴⁸ Տե՛ս Сумбат Давитис-дзе, նշվ. աշխ., էջ 33 և այդուհետ:

⁴⁹ Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Յայոց»: Ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 53, Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 84:

⁵⁰ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 142: Տե՛ս նաև Ա. Եղիազարյան, Յայ Բագրատունիների տերությունը (885-908), Եր., 2011, էջ 44-46, 122-124:

⁵¹ Տե՛ս «Очерки истории Грузии», т. II, էջ 310:

ցու աշխատության թարգմանիչ Ե. Ցագարեիշվիլին, հենվելով Յովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկության վրա, թե Ատրնեսեիը Տայքում կալվածքներ ուներ, կարծիք է հայտնել, որ Ատրնեսեին իշխում էր ոչ թե Կղարջքում, այլ Տայքում⁵²: Հետևաբար, ստացվում է, որ թագի է արժանացել Բագրատունիների ոչ թե Կղարջքի, այլ Տայքի ճյուղը⁵³: Սակայն վերոհիշյալ կարծիքները, ինչպես կտեսնենք, չեն հիմնավորվում:

Սմբատ Ա-ի ժամանակաշրջանի Տայքի վերաբերյալ պահպանվել են մի շարք տեղեկություններ:

Ըստ Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակի, որը շարադրված է Սմբատ Ա-ի անունից, վերջինս պարտավորություններ է ստանձնում Հայաստանի եկեղեցական թեմերի նկատմամբ, որոնց թվում հիշատակվում է նաև «Տայքոցն գահ»-ը⁵⁴: Այսինքն՝ ինչպես վարչական, այնպես էլ դավանանքային առումներով Տայքը Շիրակի Բագրատունիների տիրույթ էր:

Անանուն Զրուցագիրը հաղորդում է. «Թագաւորեաց տանն Հայոց Սմպատ, որդի Աշոտոյ: ...Եւ նայ տիրեաց ամենայն աշխարհին Հայոց և ընդ ձեռամբ էած գՀայք և գՏայք, գՎիրք և գԱղվանք և գՎրաց դաշտ...»⁵⁵: Այս տեղեկությունն արտացոլում է Շիրակի Բագրատունիների թագավորության վարչաքաղաքական բաժանման հետևյալ պատկերը: «Ամենայն աշխարհին Հայոց»-ը Բագրատունիների պետությունն է, որ ընդգրկում էր՝ ա. Հայքը, բ. Տայքը, գ. Վիրքը՝ Կղարջքի կուրապաղատության և բուն Վիրքի ընկալվածով, դ. Աղվանքը, ե. Վրաց դաշտը, այսինքն՝ Կուր գետի՝ Տփղիսից արևմուտք ընկած հովիտը:

Անանուն Զրուցագրի մեկ այլ կարևոր հաղորդումը մեզ է ներկայացնում Բագրատունիների պետության հիմնական չորս վարչաքաղաքական միավորները Սմբատ Ա-ի օրոք: Մոսուլի ամիրան սպառնում է ներխուժել Հայաստան, և «յորժամ լուաւ զայս թագաւորն Սըմպատ՝ էհան հրամանս ընդ ամենայն աշխարհն Հայոց և Վրաց և Աղուվանից և Տայոց»⁵⁶:

Այսպիսով, Սմբատ Ա Տիեզերակալի օրոք Բագրատունիների թագավորությունը բաղկացած էր չորս հիմնական վարչաքաղաքական միավորներից՝ Հայքից, Վիրքից, Աղվանքից և Տայքից: Ըստ որում, Տայքի՝ Վիրքից կամ Վրաց աշխարհից առանձին հիշատակությունը խոսում է այն բանի օգտին, որ այն առայժմ որևէ կապ չուներ վրացական միջավայրի հետ:

Ըստ Դավթի որդի Սմբատի՝ IX դ. վերջին Տայքի ճակք գավառի Կալ-

⁵² Տե՛ս «Յովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները Վրաստանի մասին», հայերեն տեքստը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հրատ. Ե. Ցագարեիշվիլին, Թբիլիսի, 1965, էջ 0121-0123: Տե՛ս նաև Շ. Բաղդիձե, Քարթվելական թագավորության քաղաքական համակարգի պատմությունից, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ, պատմություն, հնագիտություն, արվեստագիտություն, ազգագրություն», 113, Թբիլիսի, 1965, էջ 223-224 (վրացերեն):

⁵³ Տե՛ս Փ. Ինդրոկվա, Գեորգի Մերչուլե, Թբիլիսի, 1954, էջ 127 (վրացերեն), Դ. Մուսխելիշվիլի, նշվ. աշխ., էջ 174:

⁵⁴ Տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 187:

⁵⁵ «Պատմութիւն Անանուն Զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի)», թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Եր., 1971, էջ 159-161:

⁵⁶ Նույն տեղում: Նշված երկրների և երկրամասերի թվում հիշատակվում է նաև Վասպուրականը, սակայն վերջինս դեռ առանձին վարչաքաղաքական միավոր չէր:

մախ ամրոցին տիրում էր Կղարջքի Բագրատունիներից Գուրգենը, որն ամուսնացած էր Աշոտ Ա-ի քրոջ հետ: Սմբատ Ա-ի օրոք նա հեռացավ Կալմախից և բնակություն հաստատեց Շավշքում⁵⁷: Կալմախին նրա տիրելը բացատրվում է իշխանաց իշխանի քրոջ հետ ամուսնացած լինելով: Իսկ ինչ վերաբերում է Կալմախից հեռանալու իրողությանը, ապա պատճառը կարող ենք բացահայտել Յովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններով: Նա հաղորդում է, որ Աբաս սպարապետը Սմբատի թագադրման նախօրեին ձերբակալել է Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին և պահանջել, որ վերջինս իրեն հանձնի իր քրոջ ամուսին Գուրգենի ձեռքից խլված երկու ամրոց⁵⁸: Որքան մեզ հայտնի է, այս վկայությունը նախկինում քննության չի առնվել:

Հայտնի է, որ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհի որդի Գուրգենը 881 թ. մարտնչում էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի և նրա հովանավոր իշխանաց իշխան Աշոտի դեմ՝ միանալով Գվարամ ու Նասր Բագրատունիների և արխագաց թագավորի դաշինքին⁵⁹: 888 թ. տեղի ունեցավ հայ-արխագական երկրորդ բախումը, որի ընթացքում արդեն Գուրգենը միացավ հակառակորդ դաշինքին⁶⁰: Ըստ Դավիթի որդի Սմբատի՝ Գուրգենը թշնամացավ Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հետ և ճակատամարտեց նրա դեմ: 891 թ. Արտահանում նա պարտվեց և սպանվեց⁶¹: Կարող ենք վստահաբար նշել, որ Գուրգենը, վայելելով Սմբատի դեմ հանդես եկած Աբաս սպարապետի հովանավորությունը, վերջինիս պարտությունից հետո պետք է ընկներ մի կողմից Սմբատի, իսկ մյուս կողմից նրա հովանավորյալ Ատրներսեհ Բագրատունու հարվածների տակ: Եվ քանի որ Տայքում նա հաստատվել էր, ամենայն հավանականությամբ, Աշոտ Ա-ի թույլտվությամբ, ապա Սմբատի թագադրությունից հետո պետք է շտապեր հեռանալ այնտեղից: Հայկական և վրացական աղբյուրներում հիշատակվող Գուրգենների նույնացումից⁶² կարելի է բխեցնել, որ նրա երկու ամրոցները 891 թ. անցել էին Ատրներսեհին, որոնք էլ պահանջում էր Աբասը: Եթե եզրակացնենք, որ այդ ամրոցները և, մասնավորապես, Կալմախը, գտնվում էին Տայքի ճակք գավառում, ապա դրանով կարելի կլինի բացատրել Յովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությունը, որ Ատրներսեհը Տայքում կալվածքներ ուներ⁶³: Արդեն համոզվեցինք, որ Ատրներսեհի նախորդները չէին տիրում Տայքին կամ էլ դրա որևէ հատվածի: Անկասկած, պատմիչն ի նկատի ունի ոչ թե ողջ Տայքը, այլ նրա հյուսիսային

⁵⁷ Տե՛ս *Сумбат Давитис-дзе*, նշվ. աշխ., էջ 34:

⁵⁸ Տե՛ս **Յովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 148: Պետք է նշել, որ Հայոց սպարապետ Աբասը մինչ այդ դեպքերն ամուսնացած էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի դստեր հետ: Դատելով Կարսի Առաքելոց եկեղեցու մոտակայքում հայտնաբերված մի արձանագրությունից, որտեղ գրված է, թե «... [Բ]ագրատունի, դուստր Ատրներսեհի [իշխանաց իշխանի և ամուսին Աբասա[]] Հայոց [սպարապե]տի, որ գնաց կեսալ[րեայ]», Ատրներսեհի դուստրը մահացել է վաղաժամ (տե՛ս *С. Тер-Аветисян*. О раскопках в Карсе и новооткрытой армянской надписи IX в. // «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе». Т. III. Тифлис, 1925, էջ 121-128):

⁵⁹ Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 64:

⁶⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 65:

⁶¹ Տե՛ս *Сумбат Давитис-дзе*, նշվ. աշխ., էջ 34: Տե՛ս նաև՝ «Քարթլիի մատյան», էջ 64-65:

⁶² Տե՛ս *M. Brosset*, *Histoire de la Georgie*, I-re partie, S.-Petersbourg., 1849, էջ 274:

⁶³ Տե՛ս **Յովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 188:

ճակք գավառը, քանի որ Կալմախը գտնվում էր ճակքում: Ատրներսեհի տիրույթները Տայքի Կող գավառում գտնվել չէին կարող, քանի որ Կղարջքի կուրապաղատությունը Կող գավառի հետ ընդհանուր սահման չուներ, և բացի այդ էլ Անանուն Ջրուցագրի տեղեկություններից պարզ է դառնում, որ այն 906 թ. դրությամբ Ատրներսեհի տիրույթը չէր: Ըստ պատմիչի՝ 906 թ. Սմբատ Ա-ն որոշում է տիրել արխազաց թագավորության մեջ մտնող որոշ շրջանների, որոնցից էր իբր Տայքի Կող գավառը⁶⁴: Այնուհետև տեղի է ունենում հայկական զորքի զորաշարժը, և Սմբատ Ա-ն գրավում է Կող գավառը: Այդ շրջանում որպես Տայքի իշխան պատմիչը հիշատակում է ոմն Գոռամի, որի ինքնությունը մնում է չպարզված⁶⁵: Սմբատ Ա-ի զորավարներին հաջողվեց ձերբակալել Կոստանդին Գ-ին, սակայն հետո հայոց թագավորը ազատ արձակեց նրան: Դրա պատճառով Կղարջքի Ատրներսեհ թագավորը դավադրություն կազմակերպեց հայոց թագավորի դեմ⁶⁶: Նա անհաջողության մատնվեց և փախուստի դիմեց ու անրացավ Տայքի անառիկ շրջաններում⁶⁷: Սրանից կարելի է բխեցնել, որ Տայքի հյուսիսային որոշ հատվածներ դեռևս գտնվում էին Ատրներսեհի իշխանության սահմաններում: Սակայն խոսք չի կարող լինել Կող գավառի մասին, քանի որ այն բերդերի բացակայության պատճառով անառիկ շրջան համարվել չէր կարող: Առավել հավանական է խոսել ճակք գավառի մասին՝ Կալմախ բերդով, որին Գուրգենից հետո տիրել էր Ատրներսեհը: Շուտով Սմբատ Ա-ն արշավում և նվաճում է այդ շրջանները⁶⁸: Ատրներսեհը ներում է խնդրում: Սմբատ Ա-ն ներում է նրան, բայց նրա որդուն պատանդ է պահում իր մոտ՝ որպես հավատարմության գրավական⁶⁹: Ատրպատականի ամիրա Յուսուֆի հաջորդ արշավանքի ժամանակ արդեն պատմիչը վկայում է, որ ամիրան հետապնդեց նահանջող Սմբատ Ա-ին, որ գնաց «մինչև յաշխարի Վրաց...մինչև անկաներ մերձ յանմատչելի յամուրսն Կղարջաց»⁷⁰: Այսինքն՝ «աշխարի վրաց»-ը, որը, ինքնըստինքյան հասկանալի է, Վիրքը չէր, այլ վրացադավան Կղարջքը՝ շրջակայքով, սկսվում էր Կղարջքի անմատչելի շրջաններով, ուստի Տայքի հյուսիսային հատվածը դարձյալ միացվել է Շիրակի Բագրատունիների տիրույթներին: Ի դեպ, այդտեղ՝ Կղարջքի անությունների մոտակայքում, ապաստանում է Յուսուֆից հալածվող հայոց թագավորը⁷¹: Հավելենք, որ Ն. Ադոնցը, անդրադառնալով խնդրո առարկա երկրամասերում տիրող իրավիճակին, ենթադրել է, որ Սմբատ Ա-ի մահից հետո միայն Կղարջքի թագավոր Ատրներսեհը կարողացել է մուտք գործել Տայք⁷²:

⁶⁴ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, նշվ. աշխ., էջ 187:

⁶⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 193:

⁶⁶ Տե՛ս Ասողիկ, նշվ. աշխ., էջ 163-164:

⁶⁷ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 210:

⁶⁸ Տե՛ս նույն տեղը:

⁶⁹ Տե՛ս նույն տեղը:

⁷⁰ Նույն տեղում, էջ 216:

⁷¹ **Ս. Ջանաշիան**, անդրադառնալով Հովհաննես Դրասխանակերտցու «մինչև յաշխարի Վրաց...մինչև անկաներ մերձ յանմատչելի յամուրսն Կղարջաց» հաղորդմանը, բխեցնում է, թե իբր ինչպես Կղարջքը, այնպես էլ Տայքն անվիճելիորեն պատկանում էին վրացիներին (տե՛ս Ս. *Джанашиа*, նշվ. աշխ., էջ 21-22):

⁷² Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 391: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, էջ 197-208:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ Կղարջի Բագրատունիները IX դ. ընթացքում Տայքում չնչին բացառություններով որևէ տիրույթ չեն ունեցել: Կղարջի Բագրատունիների նախահայր Վասակը և նրա որդի Ատրներսեհը ժամանակավորապես հաստատվեցին Տայքի հյուսիսային շրջաններում, սակայն IX դ. սկզբին հեռացան Կղարջ: Նույն դարի վերջին Տայքի ճակք գավառի Կալմախ բերդին տիրում էր Աշոտ Ա-ի քրոջ ամուսին Գուրգենը, որի հեռանալուց հետո, ամենայն հավանականությամբ, այն անցավ Ատրներսեհին, սակայն X դ. սկզբին Սմբատ Ա-ն ճակքը միացրեց իր տիրույթներին:

АРМАН ЕГИАЗАРЯН – Тайк и Кгарджское княжество в IX веке. – На основе сведений из армянских и грузинских источников в статье описан административно-политический статус провинции Тайк и области Кгардж (провинция Гугарк) в IX – начале X вв. Уточнены границы Кгарджского княжества, а также прояснён вопрос о принадлежности к нему Тайка в целом, как утверждают иные грузинские историки, либо некоторых его северных частей.

Как показано в статье, Тайк на протяжении всего IX века был частью наследственных владений ширакских Багратидов. Только незначительную его территорию вокруг крепости Калмах в конце века получил Гурген, муж сестры армянского царя Ашота I. После его смерти крепостью овладел кгарджский куропалат Атрнерсэ, участник заговора против Смбата I. Когда заговор оказался раскрыт, Атрнерсэ лишился владений в Тайке.

ARMAN YEGHIAZARYAN - Tayk and the Principality of Kgharjk in IX century. - The study based on the information of Armenian and Georgian sources has shown the administrative and political situation of the province Tayk and the area of Kgharjk of the province Gugark of the Great Armenia during the IX century and the beginning of X century. The main attention is focused on the specification of boundaries of the Principality of Kgharjk and on the question of Tayk "belonging" to the principality in whole, as some Georgian historians affirm, as well as some of its northern regions.

It is shown that throughout the IX century Tayk was part of the hereditary possessions of the Bagratunis of Shirak and only its small part around the Kalmakh castle at the end of the century got Gurgen the husband of the sister of the Armenian King Ashot I. After his death the fortress was owned by Atrnerseh Curopalate of Kgharjk. When the conspiracy against Smbat I was uncovered Atrnerseh who was among the conspirators lost his possessions in Tayk.